ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2023 թվականի N 153-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-ից 19-րդ հոդվածների և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **որոշում եմ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալների և գլխավոր քարտուղարի կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հետևյալ համակարգումը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Վասակ Վարդանյան.***

ա. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն,

բ. գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն,

գ. զորահավաքային նախապատրաստության բաժին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյան.***

ա. քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,

բ. առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն,

գ. կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

դ. զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյան.***

ա. ֆինանսական վարչություն,

բ. անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն,

գ. իրավաբանական բաժին:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2022 թվականի հունվարի 12-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի, մարզպետի տեղակալների և գլխավոր քարտուղարի կողմից համակարգելու մասին»* N 6-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում *2023 թվականի հուլիսի 1-ից*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի հունիսի 23
ք. Հրազդան